# «Կանանց Իրավունքների Տուն» հասարակական կազմակերպություն (ԿԻՏ)

ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Փոքրալբերգի 2/8, հեռ.(060) 370 570, էլ.հասցե՝ womensrightshouse@gmail.com

## Տեղեկատվություն «Կանանց Իրավունքների Տուն» ՀԿ-ի գործունեության մասին



Կանանց իրավունքների տունը (ԿԻՏ) հիմնադրվել է 2017 թվականին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: Այն ստեղծվել է կանանց իրավունքների և շահերի ընդհանրության, հավասարության ու ապահովության գաղափարի շուրջ՝ խթանելով կանանց իրավունքների պաշտպանությունը, ջատագովելով նրանց հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությունը, և տրամադրելով կարիքների վրա հիմնված տարատեսակ ծառայություններ:

**Կազմակերպության գործունեության նպատակներն են՝**

- նպաստել կանանց հիմնարար իրավունքների լիարժեք իրացմանը, համայնքի հզորացմանը, կանխարգելել նրանց նկատմամբ բռնությունը և պաշտպանել նրանց իրավունքները ոտնահարումից և շահագործումներից,
- բարձրացնել կանանց իրազեկվածության և գիտելիքների մակարդակը,
- տրամադրել կարիքների վրա հիմնված աջակցություն,
- կանանց տնտեսական հզորացումը,
- խթանել կանանց մասնակցությունը քաղաքական որոշումների կայացման գործընթացում,
- աջակցել ժողովրդավարության զարգացմանը Հայաստանում:

**Կազմակերպության գործունեության ուղղություններն են՝**

1. Կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությունը և ջատագովությունը նրանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության, մասնավորապես՝ ընտանեկան/սեռական բռնության կանխարգելումը:
2. Կանանց կարողությունների զարգացումն ու աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, մասնավորապես տնտեսական զորեղացումն ու ֆինանսական անկախության ձեռքբերումը, ինչպես նաև վերջիններիս ներգրավվածությունը աշխատաշուկայում, կրթական և ձեռնարկատիրական ոլորտներում:
3. Կանանց մասնակցության խթանումը քաղաքական որոշումների կայացմանը և ակտիվ ներգրավվածության խթանումը քաղաքական կամ քաղաքացիական կյանքին, հատկապես տեղական մակարդակում:

Կանանց իրավունքների տունը աջակցում է աղջիկներին, կանանց և իրենց երեխաներին՝ տրամադրելով անվճար իրավաբանական, հոգեբանական և սոցիալական խորհրդատվություններ,

նաև ապահով կացարանի, սննդի ու հիգիենայի պարագաների գնման համար ֆինանսական աջակցություն ընտանեկան/սեռական բռնության դեպքերով, ինչպես նաև տրամադրում է իրավաբանական և սոցիալական խորհրդատվություն՝ աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերով: Բացի այդ, Կազմակերպությունը նաև նպաստում է կանանց և աղջիկների տնտեսական զորեղացմանը՝ նոր մասնագիտությունների ձեռքբերման ու բիզնես ստարտափերի ֆինանսավորման միջոցով՝ նպաստելով վերջիններիս ձեռնարկատիրության և կրթական ոլորտներում ներգրավվածության բարձրացմանը, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու ֆինանսական կայունության ձեռքբերմանը:

2023 թվականից ի վեր Կազմակերպությունը տրամադրում է ֆինանսական աջակցություն գենդերային հիմքով բռնության, մասնավորապես ընտանեկան և սեռական բռնության ենթարկված շահառուներին՝ բռնության հետևանքով առաջացած առողջական և այլ կարիքների բավարարման համար:

2022 թվականից ի վեր Կազմակերպությունը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վերընտրվել է որպես Շիրակի մարզի ընտանեկան/սեռական բռնության կանխարգելման մարզային կենտրոն:

ԿԻՏ-ը տարբեր տարիներին իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք ներառում են՝

- **Ընտանեկան/սեռական բռնության կանխարգելում**, որոնց շրջանակներում կանայք և աղջիկներ ստացել են անվճար իրավաբանական, փաստաբանական, հոգեբանական և սոցիալական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն՝ սննդի, կացարանի, առողջապահական ծախսերի, հիգիենայի և այլ անհրաժեշտ կարիքների համար:

Կանանց իրավունքների տունը **2017թ.-ից մինչև 2025թ.-ի նոյեմբերի 30-ը 8852** անձանց տրամադրել է ծառայություններ, որից՝

**6779** սոցիալական խորհրդատվություն,
**538** աշխատանք փնտրելու և մրցունակ ինքնակենսագրական կազմելու հարցով խորհրդատվություն,
**1208** ընտանեկան բռնության հարցով խորհրդատվություն,
**810** իրավաբանական խորհրդատվություն,
**1984** հոգեբանական խորհրդատվություն, թերապիաներ և դասընթացներ:

| **Շիրակի մարզի ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական տվյալներ.** | |
|---|---|
| **2020թ.** | **164** դեպք |
| **2021թ.** | **101** դեպք |
| **2022թ.** | **163** դեպք |
| **2023թ.** | **236** դեպք |
| **2024թ.** | **231** դեպք |
| **2025թ.** | **302** դեպք |

**2025թ.-ի բռնության ենթարկված երեխաների թվի աճը կապված է, 2024թ.-ի ընտանեկան բռնության մասին օրենքում կատարված փոփոխություններով:*



**Կանանց իրավունքների տան** կողմից մշտապես իրականացվում է շարունակական իրազեկման դասընթացներ ընտանեկան բռնության, տեսակների, կանխարգելման մեխանիզմների և առաջ ու անառողջ հարաբերությունների վերաբերյալ բոլոր գյուղական և քաղաքային համայնքներում:

**Օրինակ, միայն 2024-2025թթ**. ընթացքում Կազմակերպությունն իրականացրել է 60 դասընթացներ, որին մասնակցել են **865 անձ:**



- **Հոգեբանական դասընթացներ և թերապիաներ**՝ կանանց, աղջիկների և երեխաների համար՝ ծնողավարում, դեռահասության տարիքում համարժեք ինքնագնահատականի ձևավորմանն ուղղված խմբային աշխատանք, ինքնախնամքի կարևորությունը կնոջ կյանքում, խաղաթերապիա, կավաթերապիա, ակվատիպիա, նկարչաթերապիա, կոլաժաթերապիա, մանդալաթերապիա, ռելաքսացիոն թերապիա, մուլտֆիլմի դիտում: Այս թերապիաները նպաստում են կանանց հոգեկան առողջության վերականգնմանը, ինքնավստահության բարձրացմանը և վերապրած սթրեսի մեղմացմանը:



- **Տնտեսական զորեղացման ծրագրեր**, ներառյալ նոր մասնագիտությունների ուսուցում, աշխատանքային իրավունքների վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև բիզնես գաղափարների ֆինանսավորում և մենթորություն:

● Կազմակերպությունը նաև խթանում է կանանց և աղջիկների ներգրավվածությունը քաղաքական մասնակցության և որոշումների կայացման գործընթացներում՝ տրամադրելով համայնքային զարգացմանն ուղղված ենթադրամաշնորհներ:

**Կանանց և աղջիկների համար քաղաքական մասնակցության, առաջնորդության և համայնքային ներգրավման ծրագրեր**, որոնց շրջանակում բազմաթիվ կանայք և աղջիկներ մասնակցել են ճամբարների, ուսուցողական այցերի և դարձել 19 համայնքային զարգացման ծրագրեր իրականացնողներ:

**1. Հեծանվային արշավ Սառնաղբյուր համայնքում**




**2. Կանգառներ և աղբարկղերի տեղադրում Վահրամաբերդ համայնքում**




**3. «Քաղաքացիների ճիշտ վարքագիծը արտակարգ իրավիճակներում» ծրագիր (ք. Գյումրի)**




4. «Ուսանողների զարգացում Անուշավան համայնքում»



5. Խաղահրապարակ երեխաների համար Գետք համայնքում

  

6. Երիտասարդների զարգացման կենտրոն/գրադարան Մարմաշեն համայնքում

 

Առաջ

 

Հետո

7. Մեծահասակների ակումբ Մուսայելյան համայնքում





8.Խաղահրապարակ Մայիսյան համայնքում



9. Կանանց ռեսուրսային կենտրոնի ստեղծում Բասեն համայնքում





10. «Կանաչապատ Կառնուտ ծրագիր»




11. «Իրազեկման բարձրացում Գյումրիում ապրող Արցախից տեղահանված անձանց շրջանում




12. Էկո Խաղահրապարակի կառուցում Գյումրի քաղաքում





13. «Շիրակի_ձեռներեց_կանայք» ծրագիր



14. «Առավել_մրցունակ_կանայք» ծրագիր

 

15. «Կինը_համայնքում_որոշում_կայացնողն_է» ծրագիր

 

16. «Իմ Կանգառ» ծրագիր Սառնաղբյուր համայնքում

 

17. «Էկո-Ակտիվիզմի զարգացում» ք. Գյումրիում

 

**18. «Անհոգ մանկություն Մայիսյանում»**



**19. «Կանայք որպես համայնքի զարգացումը խթանող ուժ» ծրագիր (ք. Գյումրի)**



Վերջին 3 տարիների ընթացքում Կանանց իրավունքների տուն ՀԿ-ն ակտիվորեն ներգրավված է եղել կանանց իրավունքների պաշտպանության, ընտանեկան եւ սեռական բռնության կանխարգելման, ինչպես նաեւ կանանց տնտեսական զորեղացմանն ուղղված մի շարք աշխատանքներում: Հակիրճ վերլուծությունը կարող եք տեսնել ստորեւ. Կանանց իրավունքների տունը տրամադրում է իրավաբանական, հոգեբանական եւ սոցիալական խորհրդատվություններ ընտանեկան/սեռական բռնության ենթարկված անձանց, ինչպես նաեւ ապաստարանի ծառայության տրամադրում բարձր վտանգի ռիսկի առկայության դեպքում: Սա ներառում է ֆինանսական աջակցություն անվտանգ կացարանի, սննդի, հիգիենայի պարագաների համար: Կազմակերպությունը տրամադրում է նաեւ ֆինանսական աջակցություն գենդերային հիմքով բռնության, մասնավորապես ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված շահառուներին՝ բռնության հետեւանքով առաջացած առողջական եւ այլ կարիքների բավարարման համար:
Կազմակերպությունը նաեւ տրամադրում է նաեւ իրավաբանական եւ սոցիալական խորհրդատվություն՝ աշխատանքային իրավունքների խախտման դեպքերի ժամանակ՝ աջակցելով կանանց աշխատավայրում իրենց իրավունքների պաշտպանության հարցում: Կանանց իրաավունքների տունը երրորդ տարին շարունակ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից վերընտրվել է որպես Շիրակի մարզի ընտանեկան բռնության կանխարգելման կենտրոն, եւ շարունակաբար համագործակցում է մարզային ոստիկանական վարչությունների հետ, անցկացնում առանձին կամ խմբային քննարկումներ: Այս

համագործակցությունը ներառում է ոստիկանության կողմից ընտանեկան բռնության դեպքերի ուղղորդումը Կազմակերպություն՝ բազմամասնագիտական աջակցության ծառայությունների եւ ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելման նպատակով: Բացի այդ, Կազմակերպությունը անդամակցում է մի շարք ազգային եւ միջազգային Խորհուրդներում եւ կոալիցիաներում, որտեղ ունենում է իր ուրույն ներդրումը՝ միասնական ջատագովություն իրականացնելով կառավարության եւ պետական այլ իրավասու մարմինների հետ: Կազմակերպությունը շահերի պաշտպանության ջանքերով ազդել է ընտանեկան բռնության հետ կապված քաղաքականության վրա: Սա ներառում է ներքին գործերի նախարարության կողմից կազմակերպված հանդիպումներին մասնակցելը եւ կառավարական մարմինների հետ համագործակցությունը՝ քաղաքականությունների փոփոխությունների համար, որոնք ավելի լավ կպաշտպանեն բռնության ենթարկված անձանց եւ կընդլայնեն իրավական շրջանակները: «Կանանց Իրավունքների Տուն» հասարակական կազմակերպություն (ԿԻՏ) Կանանց իրավունքների տան դերը՝ որպես ընտանեկան/սեռական բռնության կանխարգելման տարածաշրջանային աջակցման կենտրոն պատվիրակված՝ ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից, ընդգծում է նրա ճանաչված փորձառությունն ու առաջնորդությունը տարածաշրջանային մակարդակում այս կարեւոր խնդիրների լուծման գործում: Այսպիսով Կազմակերպությունը ցուցաբերել է համապարփակ մոտեցում կանանց իրավունքների առաջխաղացմանը՝ ծառայությունների մատուցման, տնտեսական հզորացման նախաձեռնությունների, քաղաքականության փոփոխության ջատագովության եւ կառավարական իշխանությունների հետ ռազմավարական համագործակցության միջոցով, որոնցից է նաեւ Ոստիկանական համակարգը: Այս ջանքերը զգալիորեն նպաստել են բռնության ենթարկված կանանց, աղջիկներին եւ երեխաներին աջակցելուն, գենդերային հավասարության խթանմանը Հայաստանում եւ հատկապես Շիրակի մարզում կանանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը: Կազմակերպությունը պարբերաբար հանդիպումներ է իրականացնում, որից մեկը նաեւ վերապատրաստում-քննարկում էր Ոստիկանության Շիրակի մարզային վարչության ընտանեկան բռնության դեպքերով զբաղվող ոստիկանների եւ Անչափահասների իրավախախտումների և ընտանեկան բռնության կանխարգելման բաժնի պետ, գնդապետ Է. Էդգար Պետրոսյանի եւ ոստիկանների հետ: Հանդիպումների ժամանակ քննարկվել են ընտանեկան բռնության կանխարգելումը, ընտանեկան/սեռական բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրման ուղիները, ավելի ապահով եւ զգայուն միջավայրի ստեղծումը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց ժամանակին պատշաճ, համապարփակ ու օբյեկտիվ աջակցության ստացման ապահովումը, ինչպես նաեւ զոհակենտրոն մոտեցման կարեւորությունը: Հանդիպումների կարեւորագույն ասպեկտը ընտանեկան բռնության դեպքերի վարման առանձնահատկությունների վերաբերյալ խորացված քննարկումներն են մշտապես եղել: Քննարկում-հանդիպումների ժամանակ քննարկվել են նաեւ տեղեկատվության փոխանակման կարեւորությունը՝ պահպանելով գաղտնիությունը եւ միասնական համագործակցությունը: Տեղեկատվության արդյունավետ փոխանակումը շատ կարեւոր է ընտանեկան բռնության ենթարկված անձանց համապարփակ աջակցություն ցուցաբերելու եւ դեպքերի վարման պատշաճ ընթացքն ապահովելու համար: Հավելենք, որ ոստիկանության աշխատակիցների աշխատանքի որակը բարելավվելու եւ առկա բացերը վերացնելու նպատակով սույն թվականի հուլիս ամսից պետք է մեկնարկվեն Երեւանում եւ մարզերում ՀՀ ՆԳՆ ոստիկանության՝ համայնքային ոստիկանության ծառայողների համար նախատեսված վերապատրաստումների շարքը, որին ներգրավված են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ներքին գործերի նախարարությունը, աջակցման կազմակերպությունները եւ այլ անհատ փորձագետ-մասնագետները՝ օրենդրական փոփոխությունների եւ իրավական դաշտի, բռնության առանձնահատկությունների եւ համագործակցության ուղիների մասին ներկայացնելու նպատակով: Նախաձեռնության նպատակը համայնքային ոստիկանության ծառայողներին ներկայացնել «Ընտանեկան բռնության կանխարգելման ու ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի նոր դրույթները, ինչպես նաեւ՝ ընտանեկան բռնության դեպքերը կանխարգելելու, դրանց արձագանքելու, ուղղորդելու մեխանիզմներն ու առանձնահատկությունները:

Ոլորտային մասնագետների կողմից անցկացվող դասընթացների շնորհիվ ոստիկանների մշտական վերապատրաստումները կարեւոր են աշխատանքում պատշաճ ծառայությունների մատուցման համար, որի շնորհիվ ընտանեկան եւ սեռական բռնության կանխարգելման արդյունավետ ռազմավարությունների եւ մեխանիզմների, ինչպես նաեւ միջադեպերին զգայուն եւ արդյունավետ

արձագանքելու մեխանիզմների լավ իրացման համար նշանակալից դեր ունեն: Ոլորտում հատկանշական է արագ միջամտության տեխնիկայի, ճգնաժամերի կառավարման եւ բռության ենթարկված անձանց եւ վերջիններիս խնամակալության տակ գտնվող անձանց անվտանգության ապահովումը, որը առանց պարբերական հանդիպում-քննարկումների բացակայության դեպքում անհնար կլիներ միասնականացնել եւ ինստիտուցիոնալացնել: Ընդհանուր առմամբ, այս դասընթացները նախաձեռնողական քայլ են Հայաստանում ընտանեկան եւ սեռական բռնության դեմ պայքարի բարելավման ուղղությամբ՝ շեշտը դնելով կանխարգելման, պաշտպանության եւ իրավապահ մարմինների արդյունավետ համագործակցության վրա: Դրանք նպաստում են բռնության ենթարկված անձանց համար ավելի ապահով եւ աջակցող միջավայրի ստեղծմանը՝ միաժամանակ ամրապնդելով համայնքային ոստիկանության ծառայողների դերը մարդու իրավունքների պաշտպանության եւ ասարակության բարեկեցության խթանման գործում: Վերջին երեք տարիների ընթացքում կազմակերպությունը զգալիորեն առաջ է մղել կանանց իրավունքների պաշտպանության եւ ընտանեկան եւ սեռական բռնության դեմ պայքարի իր առաքելությունը Շիրակի մարզում: Բազմակողմանի մոտեցման միջոցով կազմակերպությունը մատուցել է ծառայություններ, շահերի պաշտպանության ջանքերով նպաստել քաղաքականությունների բարեփոխումների: Այս ռազմավարական մոտեցումը ընդգծում է կազմակերպության հանձնառությունը ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար աջակցող միջավայր ստեղծելու եւ ամբողջ երկրում գենդերային հավասարության խթանման հարցում: Եվ կառույցը դարձել է առանցքային ռեսուրս ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված անձանց համար:
Կազմակերպության հաջողությունը զգալիորեն պայմանավորված է նրա ռազմավարական գործընկերությամբ եւ տարբեր շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ, ինչպես նաեւ ազգային եւ միջազգային հարթակներում ջատագովության պարբերական իրականացման շնորհիվ:
Կանանց իրավունքների տունը սերտորեն համագործակցում է մարզային ոստիկանության բաժանմունքների հետ՝ ընտանեկան բռնության դեպքերն արդյունավետ վարելու եւ արագ արձագանքման մեխանիզմները կիրառելու նպատակով: Այս գործընկերությունը նպաստում է բազմամասնագիտական մոտեցում՝ ինտեգրելով ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավական, սոցիալական եւ հոգեբանական աջակցությունը: Ոստիկանության կողմից ուղղորդված դեպքերի կանոնավոր քննարկումները ապահովում են դեպքերի համակողմանի եւ զգայուն ընթացքը: Կազմակերպության դերը քաղաքականության վրա ազդելու գործում ընդգծում է նրա առաջնորդությունն ու փորձը ոլորտում: Կանանց իրավունքների տուն ՀԿ-ն ցուցաբերել է ուշագրավ նվիրվածություն եւ արդյունավետություն՝ առաջ մղելու կանանց իրավունքների պաշտպանությունը եւ կանխելու ընտանեկան եւ սեռական բռնությունը: Իր համապարփակ ծառայությունների մատուցման, ռազմավարական գործընկերության եւ ազդեցիկ ադվոկացիայի միջոցով կազմակերպությունը վճռորոշ դեր է խաղում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցելու եւ Հայաստանում գենդերային հավասարության խթանման գործում: Բացի այդ, աջակցման կենտրոնների շնորհիվ ոստիկանության համակարգում առկա կարծրատիպերի նվազեցում, առավել համագործակցայնություն եւ փոքր-ինչ զոհակենտրոն մոտեցում է նկատվում, սակայն, դեռեւս աշխատանքների շարունակականությունը մնում է արդի: Հանդիպումների ընթացքում ոստիկանական համակարգը եւս շարունակում է զարգանալ եւ ընդլայնել իր ջանքերը, որը նպաստում է շահառուների շրջանում դիմելության բարձրացմանը: Հանրային խորհրդում ընդգրկվելով կազմակերպությունը կարող է ազդել քաղաքականության որոշումների վրա, ներգրավվել ջատագովությանը եւ նոր քաղաքականությունների մշակմանը կամ փոփոխմանը, եւ ապահովել, որ կարեւոր խնդիրները առաջնահերթ լինեն ոստիկանության գործողություններում ինչպես նաեւ անմիջական ներդրում ունենալ ընտանեկան բռնության եւ գենդերային հավասարության հետ կապված քաղաքականության մշակման եւ իրականացման մեջ բարձրացնելով կանանց իրավունքների եւ ընտանեկան բռնության հիմնախնդիրները ոստիկանական ծառայության եւ քաղաքականություն մշակողների շրջանում: Կազմակերպության աշխատանքի տեսանելիությունը եւս կնպաստի ընտանեկան բռնության եւ
կանանց իրավունքների մասին հասարակության ավելի լայն իրազեկմանը: Կազմակերպությունը կկարողանա ավելի սերտորեն համագործակցել ներքին գործերի նախարարության հետ, ընտանեկան բռնության նկատմամբ ոստիկանության արձագանքները բարելավել եւ ապահովել, որ քաղաքականությունը զգայուն լինի ընտանեկան բռնության ենթարկված անձանց կարիքների

նկատմամբ: Սերտ համագործակցության արդյունքում ավելի հեշտ կլինի ոստիկանության պրակտիկայի եւ քաղաքականության վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը՝ հիմնված իրական փորձի եւ տվյալների վրա, ինչը կնպաստի ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատանքի շարունակական բարելավմանը: Հանրային խորհրդի կազմում լինելը թույլ կտա կազմակերպությանը վճռորոշ դեր խաղալ ոստիկանության գործելակերպի, քաղաքականության ձեւավորման եւ կատարելագործման գործում: Այս համագործակցությունը խթան կհանդիսանա էլ ավելի արդյունավետ եւ զոհակենտրոն մոտեցում ցուցաբերել ընտանեկան/սեռական բռնության ենթարկված անձանց աջակցելու համար՝ օգնում տալով թե՛ ոստիկանության ծառայությանը, թե՛ հասարակությանը:

Մեր մասին:

WRH Profile, Implemented Projects

Սոցիալական կայքեր:

Website, Facebook, Instagram, LinkedIn, YouTube

Հարգանքով՝

«Կանանց իրավունքների տուն»

ՀԿ նախագահ Կարինե Դավթյան

Էլ. հասցե՝ womensrightshouse@gmail.com

Հեռ.՝ 098 381 321